ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ (ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄԱՍՆԱԽՄԲԵՐԻ) ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

ԱՌԱՐԿԱ՝ ԴԱՍՎԱՐ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ՎԱՆՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԽՄԲԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝ Ա.Ա. ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԻՋԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1. Հանրակրթական ուսումնական հաստատության առարկայական մեթոդմիավորումները..... 5

1.1 Հանրակրթական ուսումնական հաստատության առարկայական մեթոդմիավորումների գործունեություն..... 5

1.2 Մեթոդմիավորումը դպրոցում 11

1.3 Հանրակրթական ուսումնական հաստատության դասարանի ղեկավարի (տարրական դպրոցում՝ դասվարի) գործունեությունը 12

Գլուխ 2. Հանձնարարականներ տարրական դասարանների ուսուցիչների մեթոդական աշխատանքների բովանդակության վերաբերյալ 13

2.1 Կազմակերպչական աշխատանքներ 13

2.2 Ուսումնամեթոդական աշխատանքներ.....13

2.3 Դաստիարակչական աշխատանքներ 14

2.4 Ժամանակակից դասը կրտսեր դպրոցում 14

2.5 Աշխատանք վեցամյա երեխաների հետ 15

2.6 Լեզվական գիտելիքներ 16

2.7 Ընթերցանություն 17

2.8 Առարկայական մեթոդական միավորումների պլանը..... պլանը.....17

Եզրակացություն 19

Օգտագործված գրականության ցանկ 20

Հավելված 21

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Այսօր համաշխարհային զարգացումները բնութագրվում են հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ընթացող հիմնարար փոփոխություններով՝ ժողովրդավարություն, գիտությունների ինտենսիվ զարգացում, նոր տեղեկատվական տեխնոլոգիաներ և այլն:

Հայաստանի Հանրապետությունում սոցիալ-տնտեսական նոր պայմաններն առաջադրել են հասարակական կարևոր պահանջներ՝ աճող սերնդի ձևավորման նկատմամբ, որը պետք է հանդես գա որպես կյանքի և մշակույթի բարձրագույն արժեք, լինի ակտիվ ու նախաձեռնող, ունակ վերափոխելու իրեն և իրեն շրջապատող աշխարհը: Այս տեսանկյունից կրթական հաստատությունների առաջնահերթ խնդիրը պետք է լինի այնպիսի որակյալ կրթության ապահովումը, որը կհամապատասխանի պետության, հասարակության և անձի պահանջներին:

Այս համատեքստում հատկապես կարևորվում է դպրոցի մեթոդական միավորումների ակտիվ գործունեությունը՝ որպես կրթական գործընթացի արդյունավետության ապահովման, ուսուցիչների մասնագիտական կայացման և կրթության որակի բարձրացման կարևորագույն միջոց:

Դպրոցում մեթոդական միավորման աշխատանքների հետագա զարգացման և այդ համատաքստում ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման անհրաժեշտությամբ են պայմանավորված մեր հետազոտության կարևորությունն ու հրատապությունը:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ժամանակակից դպրոցում մանկավարժների մեթոդական միավորումների գործունեության առկա վիճակը, վերլուծել դրանց առանձնահատկությունները, առաջադրել մեթոդական միավորման գործունեության կատարելագործման և արդյունավետության բարձրացման նոր ուղիներ:

Ելնելով աշխատանքի նպատակից՝ առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

1. Ուսումնասիրել և վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ հոգեբանամանկավարժական, մեթոդական գրականությունը, դպրոցի մեթոդական միավորումների գործունեությանը վերաբերող նորմատիվաիրավական փաստաթղթերը և առկա փորձը:
2. Բացահայտել մեթոդական միավորման գործունեության արդյունավետությանը նպաստող պայմանները, խոչընդոտող գործոնները:

Հետազոտության օբյեկտը ժամանակակից դպրոցում մանկավարժների մեթոդական միավորումների գործունեությունն է:

Հետազոտության առարկան ժամանակակից դպրոցում մանկավարժների մեթոդական միավորման գործունեության կատարելագործման արդյունավետ ուղիներն են:

«Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի Կանոնադրության մեջ հստակ ձևակերպված են հանրակրթական դպրոցում մեթոդմիավորումների աշխատանքների հիմնական ուղղությունները:

Գլուխ 1. Հանրակրթական ուսումնական հաստատության առարկայական մեթոդ միավորումները

Մեթոդական միավորումները ստեղծվում են նույն առարկայի երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Մյուս դեպքերում կարող են ձևավորվել մեթոդական միավորումներ հարակից առարկաների ուսուցիչներից:

Հանրակրթական տարբեր դպրոցների և ուսուցիչների նախաձեռնությամբ կարող են ստեղծվել միջդպրոցական մեթոդական միավորումներ:

Մեթոդական միավորումների նիստերը գումարվում են ամիսը առնվազն մեկ անգամ: Սահմանված կարգով նիստերն արձանագրվում են:[1]

Օրինակ՝ օտար լեզուների մեթոդմիավորման մեջ ընդգրկվում են դպրոցում դասավանդվող բոլոր օտար լեզուների մասնագետները (ռուսաց լեզու, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն):

1.1 Հանրակրթական ուսումնական հաստատության առարկայական մեթոդ միավորումների գործունեությունը

Աշխատանքի ուղղությունը	Աշխատանքի բովանդակություն	Պատասխանատու
1.Քննարկում է հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները, մեթոդական ձեռնարկները, և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին	1.անդրադառնալ օտար լեզուների չափորոշիչներին և չափորոշչային պահանջների կատարման մակարդակին, 2.թեմատիկ և օրվա պլանները քննարկել չափորոշչային պահանջներին և պետական առարկայական ծրագրին համապատասխանության տեսանկյունից,	1. մ/մ նախագահ հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, օտար լեզվի մասնագետներ

[1] Օրինակելի կանոնադրություն, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն, ընդհանուր դրույթներ:

տալիս երաշխավորություններ.	3.ուսումնասիրել փորձարկվող դասագրքերը, մեթոդական ձեռնարկները, համեմատել առարկայի պետական ծրագրի և չափորոշչային պահանջների հետ, գտնել դասագրքի և պետական ծրագրի անհամապատասխանությունները, լրացնել պակասող ծրագրային նյութը ուսումնական այլ նյութերով	
2. Ուսումնասիրում, ընդհանրացնում է մանկավարժական առաջավոր փորձը և ներդնում պրակտիկ աշխատանքում.	1.կարդալ մեթոդական զեկուցումներ, քննարկել 2.տեսական նյութի արդյունավետությունը փորձելու համար կազմակերպել նպատակային դասալսումներ նախապես կազմված գրաֆիկով 3. դասալսումները կատարել նույն օտար լեզվի մասնագետների համատեղ կազմած պլանով և քայլաշարով, 4. դասը քննարկել պատասխանելու համար հետևյալ հարցերին. • Ինչը ստացվեց և ինչպես • Ինչը չստացվեց և ինչու	1.մ/մ անդամներ, մ/մ նախագահ, հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ
3.Նպաստում է ուսուցիչների որակավորման բարձրացմանը.	1.յուրաքնչյուր տարվա համար ընտրել ուսումնասիրման մեկ կամ մի քանի թեմա և պարբերաբար անդրադառնալ այդ թեմայով մ/մ անդամների	1. մ/մ նախագահ հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի

	ուսումնասիրություններին, 2.կազմակերպել քննարկումներ, կլոր սեղաններ, գիտաժողով-ներ, օրինակելի դասեր և այլն	ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, օտար լեզվի մասնագետներ
4.Որակավորման տարակարգ չունեցող սկսնակ ուսուցիչներին նախապատրաստում է ատեստավորման.	1. կազմակերպել ընթացիկ խորհրդատվություններ և անհատական պարապմունքներ՝ ծրագրային որոշակի թեմաների շուրջ 2. տնօրինության հանձնարարականով նրանց ընդգրկել նախաատեստացիոն վերապատրաստումներում	մ/մ նախագահ տնօրինություն
5.Կազմակերպում է մասնագիտական և մանկավարժական-մեթոդական, խորհրդակցություններ խորհրդատվություններ.	1. կատարելագործել ուսում-նական կաբինետների նյութա-տեխնիկական բազան և ուսուց-ման զննականության բարձրաց-ման միջոցները, 2. դասավանդման համար ան-հրաժեշտ մեթոդական նյութերի, բաշխիչ նյութերի, տեսաֆիլմերի և այլնի նախապատրաստում և ավելի վաղ պատրաստված նյութերի մշակում և շտկում 3. աշխատանքներ՝ ուսումնական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման շուրջ (մեթոդական նյութերի, թեստերի, ծրագրերի մշակում) 4. զեկուցումների, նախագծերի թեմաների, հետազոտությունների	մ/մ նախագահ և անդամներ

	և առաջադրանքների մշակում 5.ուսումնազննական նյութերի մշակում (սահիկահանդեսներ, պատառներ և այլն) 6. թեմատիկ հարցարանների մշակում 7..քննական հարցարանների կազմում 8. ըստ առարկաների մուտքային, ընթա-ցիկ և ամփոփիչ ստուգումների արդյունք-ների շտեմարանի ստեղծում 9. բաց դասերի, արտադասա-րանական միջոցառումների տեսաֆիլմերի դարանի ստեղծում:	
6.*Ուսուցիչներին հաղորդակից է դարձնում մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպում է սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ.*	1. համագործակցել դպրոցի այլ կառուցվածքային ստորաբաժա-նումների հետ, 2. կազմակերպել աշխատանքներ՝ ուսուցիչների մասնագիտական վարպետության բարձրացման ուղղությամբ 3. մասնակցություն դպրոցի խորհուրդներին (մանկավար-ժական, մեթոդական և այլն) 4. առարկայական մրցույթների, գիտաժողովների և այլնի նախա-պատրաստում և անցկացում	մ/մ նախագահ հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, օտար լեզվի մասնագետներ

	5.ուսուցիչների մասնագիտական վարպետության բարձրացման ուղղությամբ աշխատանքների պլանավորում և կազմակերպում 6.գիտաժողովների, մանկա-վարժական զեկուցումների, վարպետության դասերի նա-խապատրաստում և անցկացում 7.մասնակցություն քաղաքում, վարչական շրջանում, համայն-քում և այլն ուսուցիչների համար կազմակերպված մրցույթներին 8. մասնակցել նոր ծրագրերի և մանկավարժական տեխնոլոգիաների ներդրման փորձարարական աշխատանքներին:	
7.***սահմանված կարգով կազմակերպում է փորձարկվող դասագրքերի փորձաքննություն.***	1. ուսումնասիրել փորձարկվող դասագրքերը, մեթոդական ձեռնարկները, համեմատել առարկայի պետական ծրագրի և չափորոշչային պահանջների հետ, 2.ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ ներկայացնել անկողմնակալ մասնագիտական կարծիք, հիմնավորել դիտողություններն ու առաջարկությունները,	մ/մ նախագահ հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, օտար լեզվի մասնագետներ

8. *Մանկավարժական խորհրդում քննարկելուց հետո առաջարկություն է ներկայացնում հանրակրթական դպրոցի տնօրենին՝ ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման մասին.*	1.առաջարկություն ներկայացնել տնօրինությանը երրորդ օտար լեզվին դպրոցական պարտադիրից ժամեր տրամադրելու վերաբերյալ	մ/մ նախագահ, մ/մ անդամներ
9. *Կատարում է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն է ներկայացնում հանրակրթական դպրոցի տնօրենին.*	1.մ/մ հերթական նիստում քննարկել օտար լեզվի դասաժամերի նախնական բաշխման հարցը, սահմանել բոլորի համար ընդունելի սկզբունքներ և բաշխումը կատարել անաչառ	մ/մ նախագահ, մ/մ անդամներ հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ուսումնական աշխ. գծով տեղակալը
10.Կազմակերպում է դպրոցական օլիմպիադաներ, առարկայական մրցույթներ և այլ միջոցառումներ.	1.կազմել օտար լեզվի օլիմպիադայի թեստերը կամ հարցաշարերը, 2.կազմակերպել առարկայական շաբաթներ, մրցույթներ, 3.մասնակցել դպրոցում կամ դպրոցից դուրս գիտաժողովների, նախապատրաստել զեկուցումներ և ելույթներ	

Մեթոդմիավորման աշխատանքները համակարգում է մեթոդմիավորման նախագահը:

Մեթոդմիավորման նախագահի աշխատանքն ունի հիմնականում երկու ուղղություն՝ կազմակերպչական և ուսումնամեթոդական:

1. Մեթոդմիավորման նախագահը վարում է մեթոդմիավորման մատենավարությունը, արձանագրում է մ/մ նիստերը, հետևում է մ/մ անդամների անձնական թղթապանակների ճիշտ վարման ընթացքին, հարցումների միջոցով պարզում է մ/մ անդամների կարիքները, մ/մ անդամների օգնությամբ վերլուծում է նախորդ տարվա աշխատանքները և պլանավորում է նոր ուսումնական տարվա անելիքները:
2. Մեթոդմիավորման նախագահը ուսումնասիրում է և մ/մ անդամներին իրազեկում է հրահանգչական-նորմատիվային փաստաթղթերի և ուսումնական գործընթացում դրանց իրագործման անհրաժեշտության մասին:
3. Օգնում է մ/մ անդամներին մանկավարժական առաջավոր փորձն ուսումնասիրելու, տարածելու և համակարգում է այդ աշխատանքի արդյունները:
4. Մ/մ նախագահը կազմում է փոխադարձ դասալսումների գրաֆիկը և կազմակերպում է նպատակային դասալսումներ:

Բնականաբար, վերը շարադրվածով չի սահմանափակվում հանրակրթական դպրոցի մեթոդմիավորման աշխատանքները:

1.2 Մեթոդմիավորումը դպրոցում

Ուսուցիչների մեթոդական աշխատանքը կազմակերպող գլխավոր կառույցը առարկայական մեթոդմիավորումն է: Այն նպաստում է ուսուցիչների մասնագիտական վարպետության, մեթոդական կուլտուրայի, ստեղծագործական ներուժի բարձրացմանը:

Մեթոդմիավորման աշխատանքն անհրաժեշտ է կառուցել ընդհանուր մանկավարժական խնդիրների շուրջ, որն այդ պահին ծառացել է դպրոցի առջև: Ընդհանուր թեմայի քննարկման ընթացքում մեթոդմիավորման նիստերում ցանկալի է կոնկրետացնել այն: Թեմայի որոշումից հետո անհրաժեշտ է նշել դրա գործնական ելքի ձևը. ելույթներ սեմինարներում, բաց դասի ընթացքում աշխատանքի փորձի ներկայացում և այլն:[2]

[2] Լ.Թ. Ասատրյան, Մ.Ա. Ասատրյան, Ն.Ա. Սաֆարյան «Դպրոցի կառավարման հիմունքները», Երևան-Արտագերս-2018, բաժին III էջ 126-130, բաժին IV, էջ 194-195:

1.3 Հանրակրթական ուսումնական հաստատության դասարանի ղեկավարի (տարրական դպրոցում՝ դասվարի) գործունեությունը

Հանրակրթական դպրոցում դասարանի ղեկավարը.

1. դաստիարակչական աշխատանք է իրականացնում իր դասարանի սովորողների շրջանում՝սերտորեն համագործակցելով մանկավարժական մյուս աշխատողների հետ.
2. նպաստում է սովորողների նկատմամբ ուսումնական հաստատության և ընտանիքի մանկավարժական միասնական պահանջների ապահովմանը.
3. իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, հանրակրթական դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն.
4. կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆինանսական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ.
5. ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին կարգապահական տույժի ներկայացնելու հարցը.
6. արգելում է սովորողների, ուսուցիչների և ծնողների այն նախաձեռնությունները, որոնք կարող են սովորողի առողջության, կյանքի համար վտանգ պարունակել, ինչպես նաև խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:[3]

Դասարանի ղեկավարը դաստիարակչական աշխատանքներ է իրականացնում դաստիարակության հետևյալ ուղղություններով. մտավոր, հոգևոր-բարոյական, գեղագիտական, էկոլոգիական, ֆիզիկական, աշխատանքային, քաղաքացիական, իրավական, տնտեսագիտական: Նպաստում է նաև ընտանեկան դաստիարակության արդյունավետ իրականացմանը:[4]

[3] «Դաստիարակչական աշխատանքը դպրոցում», Երևան-2007:
[4] Լ.Թ. Ասատրյան, Մ.Ա. Ասատրյան, Ն.Ա. Սաֆարյան «Դպրոցի կառավարման հիմունքները», Երևան-Արտագերս-2018, էջ 126:

Գլուխ 2. Հանձնարարականներ տարրական դասարանների ուսուցիչների մեթոդական աշխատանքների բովանդակության վերաբերյալ

Ուսուցիչների առարկայական մեթոդմիավորումը դպրոցում մեթոդական աշխատանքի կազմակերպման հիմնական օղակն է, որն իրականացնում է կազմակերպական, ուսումնամեթոդական և դաստիարակչական աշխատանքներ:

2.1 Կազմակերպչական աշխատանքներ

1. Մեթոդմիավորման աշխատանքների պլանավորում
2. Մեթոդմիավորման փաստաթղթերի ստեղծում և ձևավորում
3. Մանկավարժական կադրերի ընդհանուր բնութագրերի կազմում
4. Մեթոդական գանձատուփի ստեղծում (բաց դասերի պլանավորումներ, թեմատիկ պլանավորումներ, դիդակտիկ նյութեր, մեթոդական հանձնարարականներ և այլն)

2.2 Ուսումնամեթոդական աշխատանքներ

1. Կրթության նախարարության նորմատիվ փաստաթղթերի ուսումնասիրում և գործադրում գործնական աշխատանքում
2. Դասին ներկայացվող ժամանակակից պահանջների ներդրում ուսումնական գործընթացում
3. Մեթոդական, հոգեբանամանկավարժական, գիտահանրամատչելի գրականության նորույթների ծանոթացում, առարկայական ամսագրերի բովանդակության համակարգված ներկայացում
4. Առաջավոր մանկավարժական փորձի ուսումնասիրում, ընդհանրացում և ներդրում
5. Ուսուցիչների ինքնակրթության աշխատանքների կազմակերպում
6. Ծրագրի առանձնակի դժվարություն ներկայացնող թեմաների /դասերի պլանավորում, մշակում և վերլուծություն: Այդ թեմաների կապակցությամբ բաց դասերի կազմակերպում առավել փորձառու ուսուցիչների կողմից:

2.3 Դաստիարակչական աշխատանքներ

1. Դասվարի աշխատանքի կազմակերպումը կրտսեր դպրոցականների հետ
2. Դաստիարակչական գործընթացի իրականացումը երկարօրյա խմբերում
3. Աշակերտների ստեղծագործական կարողությունների զարգացումը արտադասարանային ժամերին
4. Հասարակական մանկական կազմակերպությունների դերը դաստիարակչական աշխատանքների համակարգում
5. Արտադասարանական միջոցառումների կազմակերպման և անցկացման վերաբերյալ մեթոդական հանձնարարականների մշակում

Առարկայական մասնախումբը մեթոդական թեմայի ընտրության և պլանավորման հարցում առաջնորդվում է դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի կոնկրետ իրավիճակով՝ հաշվի առնելով այն խնդիրները, որոնք նախագծվել են տվյալ ուսումնական տարվա համար և այն հիմնահարցերով, որոնք բացահայտվել են անցած ուստարվա ուսումնադաստիարակչական գործընթացի վերլուծության արդյունքում:

2.4 Ժամանակակից դասը կրտսեր դպրոցում

1. Ժամանակակից դաս. ուսումնական գործընթացի ակտիվացման ուղիները:

2. Դասի կատարելագործումը ուսուցման ակտիվ ձևերի ներդրման հիմքով:

3. Դասի արդյունավետության որոշման մեթոդները: Դասի ինքնավերլուծում:

4. Ուսուցման անհատական և խմբային ձևերի կիրառումը դասերին:

5. Անհատական աշխատանքների կազմակերպման ձևերը՝ ուսման նկատմամբ տարբեր մակարդակների մոտիվացիա ունեցող աշակերտների հետ:

6. Համակցված (ինտեգրված) դասը կրտսեր դպրոցում:

7. Խաղային իրավիճակների օգտագործումը աշակերտների ճանաչողական գործունեության ակտիվացման նպատակով:

8. Աշակերտների ինքնուրույնուն աշխատանքների կազմակերպումը դասի տարբեր փուլերում:

9. Աշխատանքի ակտիվ ձևերը և դրանց տեղն ու դերը դասի տարբեր փուլերում:

10. Դասերի ուսումնական օպտիմալ ծանրաբեռնվածությունը:

11. Կրտսեր դպրոցականների աշխատունակության հաշվառումը:

12. Ոչ ստանդարտ դաս. որոնում, լուծում, հայտնաբերում:

13. Սովորիր սովորել: Աշխատանք դասագրքի, լրացուցիչ գրականության և բառարանների հետ:

14. Աշակերտների ինքնուրույնության զարգացումը:

2.5 Աշխատանք վեցամյա երեխաների հետ

1. Ուսուցման շերտավորված ուսուցումն իբրև վեցամյա դպրոցականների կարդալու, գրելու և հաշվելու կարողությունների զարգացման կարևոր նախապայման:
2. Անգնահատանիշ ուսուցման պայմաններում աշակերտների գիտելիքների ստուգումն ու գնահատումը:
3. Դասն առաջին դասարանում. խաղից մինչև ուսումնական գործունեություն:
4. Գրաճանաչության նախապայբբենական փուլի ուսուցման առանձնահատկութ-յունները:
5. Կարդալու սկզբնական կարողությունների ուսուցման ընթացքում անհատական մոտեցման մասին:
6. Կապակցված խոսքի ուսուցման առանձնահատկությունները դասագրքի նկարազարդումների միջոցով:
7. Դիդակտիկ նյութերի, ուսումնադիտողական պարագաների օգտագործումը գրաճանաչության դասերին:
8. Գրական ունկնդրման դասերի կազմակերպումը:
9. Դիդակտիկ խաղերը և խաղային իրավիճակները՝ իբրև գիտելիքների նկատմամբ հետաքրքրությունների խթանման միջոց:

10. Աշակերտների խաղային գործունեության կազմակերպումը դասերին:

11. Վեցամյա աշակերտների խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների համակարգը:

12. Ֆիզկուլտ-առողջարարական միջոցառումները ուսումնական օրվա ռեժիմում:

2.6 Լեզվական գիտելիքներ

1. Գրագետ խոսքի ձևավորում

2. Խոսքի զարգացման աշխատանքների համակարգը մայրենիի ուսուցման գործընթացում

3. Ուղղագրական սխալները կանխելու աշխատանքների համակարգը:

4. Կրտսեր դպրոցականների բառապաշարի ակտիվացման միջոցներն ու ուղիները:

5. Ուսուցողական փոխադրություններ և շարադրություններ գրելու նախապատ-րաստական աշխատանքները:

7. Վայելչագրական հմտությունների ձևավորման աշխատանքների համակարգը:

8. II-IV դաս. աշակերտների գրավոր աշխատանքների ստուգման համակարգը:

9. Սխալների ուղղման աշխատանքների համակարգը տարրական դասարաններում:

10. Գրավոր խոսքում տառերի բացթողման, փոփոխման և խեղաթյուրման սխալների կանխումը և դրանց շուրջ տարվող աշխատանքների համակարգը:

11. Աշակերտների խոսքի զարգացման ուղղությամբ կազմակերպվող ստեղծագործա-կան աշխատանքների տեսակները:

12. Լեզվական հասկացությունների ձևավորման առանձնահատկությունները տար-րական դասարաններում:

13. Թեմատիկ գրավոր աշխատանքների կազմակերպման և գնահատման մեթոդները և դրանց վերլուծությունը:

2.7 Ընթերցանություն

1. Կրտսեր դպրոցում մայրենիի ժամերին ներկայացվող ժամանակակից պահանջները:
2. Կարդալու հմտության կատարելագործումը՝ որպես հետագա ուսուցման հաջողության և կրտսեր դպրոցականների դաստիարակության հիմք:
3. Տեքստի շուրջ տարվող աշխատանքների ձևերի և հնարների բազմազանությունը՝ իբրև աշակերտների կարդալու հմտության, արժեքային համակարգի կայացման և գեղագիտական ճաշակի ձևավորման կարևոր պայման:
4. Աշակերտների բառապաշարի ակտիվացումը զննականության ապահովման միջոցով:
5. Մայրենիի ժամերին աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպումը:
6. Աշակերտների խոսքային կարողությունների ձևավորման աշխատանքների համակարգը դասարանական և արտադասարանական ընթերցանության միջոցով:
7. Աշակերտների ճիշտ, սահուն, գիտակցված, արտահայտիչ ընթերցանության ձևավորումը հետագայում ուսումնական նյութի հեշտ ընկալման հիմքն է:
8. Պատմելու տեսակները և դրանց դերը աշակերտների խոսքի զարգացման և ստեղծագործական երևակայության զարգացման գործում:
9. Աշակերտների տնային ընթերցանության կազմակերպման աշխատանքների համակարգը:
10. Մայրենիի ժամերին տարբեր ժանրերի ստեղծագործությունների շուրջ տարվող աշխատանքների մեթոդները:
11. Աշակերտների՝ տեքստի շուրջ աշխատելու կարողությունների ձևավորումը:
12. Ստեղծագործական բնույթի առաջադրանքները մայրենիի ժամերին:

2.8 Առարկայական մեթոդական միավորումների աշխատանքային պլանը

ՀՀ պետական հանրակրթական դպրոցի մեթոդական միավորումը (այսուհետ՝ մեթոդմիավորում) ստեղծվում է նույն առարկայի կամ հարակից առարկաների ուսուցիչներից դպրոցում ուսումնամեթոդական աշխատանքների

արդյունավետ կազմակերպման պատակով:

Մեթոդական միավորումները ստեղծվում են նույն առարկայի երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Մյուս դեպքերում կարող են ձևավորվել մեթոդական միավորումներ հարակից առարկաների ուսուցիչներից: Կարող են ստեղծվել փնջային (միջդպրոցական) մեթոդմիավորումներ տարբեր դպրոցների տնօրինությունների նախաձեռնությամբ: Դպրոցում գործում է դասղեկների և դասվարների համար առանձին մեթոդմիավորում: Դպրոցի տնօրենը մանկավարժական խորհրդի երաշխավորմամբ նշանակում է մեթոդմիավորումների ղեկավարներին:

Մեթոդական միավորումների նիստերը գումարվում են ամիսը առնվազն մեկ անգամ: Սահմանված կարգով նիստերն արձանագրվում են: Զեկուցումները, հաշվետվությունները, հաղորդումները, մշակումները, ռեֆերատները, ուսումնասիրությունների արդյունքները և քննարկվող այլ փաստաթղթեր կցվում են արձանագրությանը:

Մեթոդմիավորումների նպատակը կրթական նոր տեխնոլոգիաների ներդրումն է մանկավարժական գործընթացում՝ որպես նրա կազմակերպչամեթոդական գործիք:[5]

Մեթոդմիավորման ղեկավարը վարձատրվում է սահմանված կարգով:

[5] Լ.Թ. Ասատրյան, Մ.Ա. Ասատրյան, Ն.Ա. Սաֆարյան «Դպրոցի կառավարման հիմունքները», Երևան-Արտագերս-2018, էջ 194-195:

Եզրակացություն

1. Կրթության զարգացման ժամանակակից միտումները պահանջում են վերանայել դպրոցի կառավարման ենթահամակարգերի գործունեության, այդ թվում՝ առարկայական մեթոդական միավորումների կառավարման առանձնահատկությունները:
2. Հիմնախնդրի վերաբերյալ մեր ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվեցին մեթոդական միավորման գործունեության արդյունավետությանը խոչընդոտող հետևյալ գործոնները՝ մեթոդական միավորումներում քննարկումների ոչ միշտ արդյունավետ բովանդակություն, պլանավորված հարցերի ձևական բնույթ, ուսուցիչների ստեղծագործական-հետազոտական աշխատանքների պասիվ վիճակ, ուսուցիչների մասնագիտական կոմպետենտության անհամապատասխանություն դպրոցի գործունեության և ռազմավարական ուղղություններին:
3. Մանկավարժների մեթոդական միավորման գործունեության կատարելագործման հիմքում ընկած են կոմպետենտային, համակարգային, սիներգետիկ, գործունային, անձնակենտրոն, մշակութաբանական տեխնոլոգիական մոտեցումները, որոնց հաշվառումը կապահովի մեթոդական միավորումների գործունեության նպատակի իրականացումը դպրոցում:
4. Մանկավարժների մեթոդական միավորումները հանրակրթական դպրոցներում պետք է դառնան դպրոցի զարգացման հիմնական սուբյեկտներ՝ խթանելով ինովացիաների ներդրումն ուսումնադաստիարակչական գործընթացում, սովորողների կրթության որակի բարձրացումը, ուսուցիչների մասնագիտական կոմպետենցիաների զարգացումն ու գործունեության դրական մոտիվացիայի ապահովումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Օրինակելի կանոնադրություն, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն, ընդհանուր դրույթներ:
2. Լ.Թ. Ասատրյան, Մ.Ա. Ասատրյան, Ն.Ա. Սաֆարյան «Դպրոցի կառավարման հիմունքները», Երևան-Արտագերս-2018, բաժին III էջ 126-130, բաժին IV, էջ 194-195:
3. «Դաստիարակչական աշխատանքը դպրոցում», Երևան-2007:
4. ՀՀ կրթության մասին օրենքը: Պաշտոնական տեղեկագիր,, 1999:
5. Մ.Առաքելյան, Ռ.Մարդոյան, Ուսուցիչների մասնագիտական մեթոդական միավորումների ձևավորման և զարգացման հարցը մանկավարժության մեջ, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ / Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես/Երևան, 2015թ., N1, էջ 45-50:
6. Մ.Առաքելյան, Առարկայական մասնախմբերի գործունեության հիմնական ուղղությունները, «Մանկավարժական միտք» ամսագիր, Երևան, 2015թ., N 3, էջ 112-116:
7. Մ.Առաքելյան, Առարկայական մեթոդմիավորումների դերը ժամանակակից դպրոցի զարգացման գործում, Модернизация образования в контексте современных педагогических парадигм, / сборник наычно-образовательных докладов и статей/, Ереван, АГПУ-2014г., ст. 132-135:

Հավելված

Ինքնակրթության աշխատանքների կազմակերպում

Հ/հ	Ուսուցչի անուն, ազգանուն	Ինքնակրթության թեմա	Գործնական դրսևորումը (զեկուցում, բաց դաս, փորձի ընդհանրացում, ստեղծագործական հաշվետվություն)	Ուսուցիչը թեմայի դասավանդման իր փորձը՝երբ և որտեղ է ներկայացնելու (մանկխորհի նիստում, մասնախմբի նիստում և այլն)